



**Խաղաղության
երկխոսություն**



**Տարեկան
գեկուլյց**


«Խաղաղության երկխոսություն» ՀԿ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: <http://www.peacedialogue.am>

**ԻՆՉԻ՞ ԿԱՐԵՒՈՐԵՑԻՆՔ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱԿՏԻՎԻԶՄԸ**

«Խաղաղության երկխոսություն»-ը Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպություն է, որում միավորված տարբեր երկրների ներկայացուցիչները (Հայաստանից, Ռուսաստանից, Վրաստանից եւ Գերմանիայից), ինչպես իրենց հայրենի երկրներում, այնպես էլ Կովկասում խաղաղասիրական բնագավառում երկար տարիների աշխատանքային փորձ ունեն:



ք. Վանաձոր, 2013



**Տարեկան
գեկուԼյց**

**' 2011 -
2012**


**ԻՆՁԻ՞ ԿԱՐԵԻՈՐԵՑԻՆՔ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱԿՏԻՎԻՉՄԸ**



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ ՉԵԿՈՒՅՑ 2011-2012

Ինչպե՞ս ենք ընկալում քաղաքացիական ակտիվիզմի դերը խաղաղության կառուցման գործում -----	5
Ինչո՞ւ կարեւորեցինք քաղաքացիական ակտիվիզմը -----	15
Ի՞նչ ճանապարհ ընտրեցինք ակտիվիզմի ձեւավորման համար -----	25
• Ոչ բռնի պայքարի ճանապարհ -----	31
• Քաղաքացիական կրթություն -----	37
• Փոփոխությունների միտված երկխոսություն -----	41
Ինչի՞ եւք հասել մինչ այժմ: Ի՞նչ դասեր ենք քաղել -----	47
Ի՞նչ ենք նախատեսում ապագայում -----	55
Ֆինանսական հաշվետվություն -----	65



A man with dark hair and a beard, wearing a brown jacket, is pointing his right hand towards a crowd of people. The crowd consists of various individuals, some wearing winter hats and coats. The background is slightly blurred, suggesting an outdoor setting. The overall tone is serious and focused.

«Երբեք նախապես չես կարող իմանալ, թե ինչ արդյունք կունենա արածդ, սակայն, երբ ոչինչ չես անում՝ արդյունք էլ չի լինում:»

Մահաբաժա Գանդի

Ինչպե՞ս ենք ընկալում քաղաքացիական ակտիվիզմի դերը խաղաղության կառուցման գործում

Արդեն ավելի քան չորս տարի է, որ «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունն աշխատում է Խաղաղության կառուցման ոլորտում եւ իր գործընկերների հետ փորձում հասնել տարածաշրջանում Խաղաղասիրական շարժման ու Խաղաղության մշակույթի ձեւավորման: 2011-2012թթ.-ին տարածաշրջանում Խաղաղասիրական ակտիվիստական շարժման ձեւավորման այդ երազանքի անկյունաքարը հանդիսացավ Հայաստանում, ինչպես նաեւ՝ տարածաշրջանում քաղաքացիական ակտիվիզմի ձեւավորումը եւ զարգացումը, որտեղ կարեւոր դեր էր նախասահմանված, հատկապես, երիտասարդների համար:

Առաջնորդվելով տարբեր կոնֆլիկտային տարածաշրջաններում գործող իր

գործընկերների երկար տարիների միջազգային փորձով եւ տեղական ու տարածաշրջանային սեփական ուսումնասիրություններով, «Խաղաղության երկխոսություն»-ն, այդ նպատակին հասնելու համար, կարեւորեց քաղաքացիների անտարբերության եւ լռության մշակույթի հաղթահարումը, իրականությունը քարոզչությունից տարբերակելու համար նրանց մոտ քննադատական եւ վերլուծական մտածելակերպի զարգացումը, ոչ բռնի պայքարի ուղին ընտրելու մոտեցումները, տարբեր ոլորտներում քաղաքացիների դերի եւ ձայնի կարեւորության գիտակցումը, որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիական վերահսկողության սահմանումը, ինչպես նաեւ՝ տեղական, ազգային եւ տարածաշրջանային մակարդակներում առկա հակամարտությունների Խաղաղ կարգավորման գործընթացներում քաղաքացիական մասնակցության




Առաջնորդվելով «Մարդը՝ լիիրավ եւ պատասխանատու քաղաքացի» սկզբունքով, «ԽԵ»-ն կարեւորեց այնպիսի գիտակցության ձեւավորումը, համաձայն որի պետության եւ յուրաքանչյուրի համար քաղաքացին ու իրավունքը պետք է լինեն բարձրագույն արժեքներ:

Քաղաքացիական ակտիվիզմի զարգացման միջոցով «Խաղաղության երկխոսությունը» ձգտեց հասնել Խաղաղության մշակույթի կամ Խաղաղասիրական շարժման



ձեւավորման, որտեղ յուրաքանչյուր ոք գիտակցում է իր դերն ու պատասխանատվությունը իր համայնքում, երկրում եւ տարածաշրջանում խաղաղության ձեռքբերման եւ պահպանման գործում, օժտված է իր երկրի իշխանություններից խաղաղություն պահանջելու իրավունքով, պայքարում է հանուն իրավունքի գերակայության, սոցիալական արդարության, հասարակական եւ քաղաքական գործընթացներում քաղաքացիական ակտիվ մասնակցության:

Ելնելով կազմակերպության «**Տեսնեք ով ենք մենք, ընտրեք՝ ով ենք ուզում լինել**» եռամյա ռազմավարության գաղափարախոսությունից, որպես առանցքային ուժ ընտրվեցին երիտասարդները, ովքեր առավել բաց են փոփոխությունների հանդեպ, քարացած չեն կարծրատիպային եւ



կաղապարված մտածողությամբ, սակայն, չունենալով ինքնարտահայտման հարթակ եւ հնարավորություններ, առավել հեշտ եւ խոցելի թիրախն ու գործիքն են հանդիսանում ազգայնամուլական եւ միլիտարիստական քարոզչության համար: Նպատակն էր ստեղծել

երիտասարդ աղջիկներից եւ տղաներից կազմված մի խումբ, ովքեր պատրաստ են պատասխանատվություն վերցնել իրենց վրա, կկարենուրեն իրենց դերը համայնքում, երկրում եւ տարածաշրջանում խաղաղության ձեռքբերման եւ պահպանման գործում, կաշխատեն այնպիսի հասարակության ձեւավորման ուղղությամբ, որը տեղյակ է եւ ընդունում է Հայաստանի ներգրավվածությամբ բոլոր հակամարտությունների՝ ոչ բռնի ճանապարհով կարգավորման անհրաժեշտությունը: Նախատեսվում էր, որ երիտասարդների այդ խումբը կաշխատի՝ համախմբելով իր հասակակիցներին եւ համագործակցելով քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչների ու կառույցների հետ, ինչպես երկրի ներսում, այնպես էլ հակամարտության մեջ ներգրավված մյուս կողմերի

երիտասարդների ու կազմակերպությունների հետ: Այս ձգտումն իրականություն դարձնելու նպատակով, ներգրավված երիտասարդների համար պետք էր քննադատական մտածողություն, վերլուծական կարողություններ ձեւավորելու, մի շարք այլ հմտություններ եւ կարողություններ ձեռք բերելու եւ զարգացնելու հնարավորություն ստեղծել: Դրանք անհրաժեշտ են ակտիվ ու իրավագիտակից քաղաքացու ձեւավորման համար, կարող են օգտագործվել խաղաղասիրական աշխատանքում ըստ իրենց՝ երիտասարդների նախասիրությունների: Միաժամանակ պետք էր նաեւ հարթակ ձեւավորել՝ ձեռք բերած կարողություններն ու գիտելիքները գործնականում կիրառելու համար:

«ԽԵ» աշխատակազմի համոզմամբ, խաղաղությունը հաստատուն երեւոյթ չէ, այն համալիր, երկարաժամկետ եւ բազմաշերտ սոցիալ-քաղաքական գործընթաց է, ինչի հիմքում ընկած են հասարակության կարիքները: Խաղաղությանն ուղղված քայլերի ազդեցությունն ու արդյունավետությունը ուղիղ համեմատական է հասարակության մեջ բռնության նվազմանն ու սոցիալական արդարության հաստատմանը:

«ԽԵ» աշխատակազմը համամիտ է նաեւ այն սահմանման հետ, որ հետկոնֆլիկտային իրավիճակներում խաղաղության կառուցումը հանդիսանում է խաղաղության պահպանման գլխավոր գործիքներից մեկը, իսկ ընդհանուր առմամբ, խաղաղության կառուցումը հանդիսանում է մի այնպիսի միջոցառում, որը կարելի է նախաձեռնել հակամարտության

Կառուցվածքային կամ համակարգային փոփոխություններ

Խաղաղության կառուցումը ոչ բռնի ճանապարհով

Անհատական գիտակցության եւ վարքագծի փոփոխություն



Հակամարտող կողմերի միջեւ հարաբերությունների բարելավում եւ բռնության մշակույթի նկատմամբ անհանդուրժողականության ձեւավորում

ցանկացած փուլում, ինչպես նաեւ՝ հարաբերականորեն խաղաղ հասարակություններում:

Խաղաղության կառուցումն իր մեջ ներառում է բոլոր այն գործողությունների ամբողջությունը, որոնք աջակցում են խաղաղության հաստատմանն ու բռնության կանխմանը: Խաղաղության հաստատումը բազմաշերտ է եւ ձեռք չի բերվում միայն դիվանագիտական ճանապարհով, այլ հասարակության բոլոր շերտերի խնդիրն է հանդիսանում:

Ինֆոգրաֆիկան վերցված է՝ «Berghof Glossary on Conflict Transformation; 20 notions for theory and practice», հրատարակությունից, Բեռլին, 2012, էջ. 63.



«Խաղաղության երկխոսության» ընկալմամբ, ոչ բռնի ճանապարհով խաղաղության կառուցումը հակամարտության մեջ ներգրավված հասարակության կամ հասարակությունների միջեւ ենթադրում է եռաշերտ գործողությունների ամբողջություն.

- **Կառուցվածքային կամ համակարգային հակասությունների նվազեցման վրա ներազդեցություն**, ինչը խիստ կարեւոր պայման է երկարատեւ խաղաղության համար: Սրա կարեւորագույն տարրերից են՝ երկրում առկա ժողովրդավարության չափանիշները, հակամարտություն ծնող ենթակառուցների բարեփոխումը (ներառյալ կրթական համակարգը), տնտեսական կայուն զարգացումը, սոցիալական արդարությունը եւ մարդու




- իրավունքների գերակայությունը, քաղաքացիական հասարակության հզորացումը եւ կառուցողական, անկախ ու անկողմնակալ լրատվության առկայությունը:
- **Հակամարտող կողմերի միջեւ հարաբերությունների բարելավումը երկխոսության ձեւավորման ճանապարհով**, ինչը հնարավորություն կտա վերականգնելու խաթարված հաղորդակցությունն ու նվազեցնելու հետ-

- պատերազմական թշնամական տրամադրությունները, հետեւանքները: Այս գործընթացում կարեւոր են նաեւ հաշտեցման, վստահության կառուցման տարրերը:
- **Անհատական ընկալման եւ վարքագծի փոփոխությունը խաղաղության կառուցան գործընթացի մյուս հարթությունն է:** Այն ենթադրում է անհատների մոտ ոչ բռնի պայքարի եւ հակամարտությունների տրանսֆորմացիայի կարողությունների ուժեղացում, կարծրատիպերի կոտրում,

պատերազմից տուժած խմբերի աջակցություն, պատերազմից ստացված ֆիզիկական եւ հոգեբանական վնասվածքների բուժում:

2011-2012թթ.-ի ընթացքում, «ԽԵ»-ն առավելապես մեծ ջանքեր ներդրեց երրորդ՝ անհատների ընկալումների փոփոխություններին ուղղված բաղադրիչի շրջանակներում:

Կարեւորելով անհատի դերն ու ազդեցությունը հասարակական խմբերի շրջանում՝ նպատակն էր հասնել անհատների մոտ խաղաղության մշակույթի եւ հակամարտությունների ոչ բռնի ճանապարհով կարգավորման ընկալումների ձեւավորմանը՝ ակնկալելով դրանից բխող վարքագծային փոփոխություններին:




«Խաղաղությանն են ձգտում.
արդարություն փնտրիր:»

Հռոմի պապ Պավել VI

ԻՆՉՈՒ՞ ԿԱՐԵՒՐԵՑԻՆՔ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎԻՉՄԸ

Ավելի քան 20 տարի
է անցել Լեռնային
Ղարաբաղի

հիմնախնդրի շուրջ հայ-
ադրբեջանական
պատերազմից, որը մինչ
օրս մնում է չլուծված՝ իր
հետ բերելով նաեւ
բազմաթիվ այլ
քաղաքական,
քաղաքացիական,
սոցիալ-տնտեսական,
բնապահպանական
խնդիրներ: Ավելին,
տասնյակ տարիներ ձգվող
հակամարտությունը, դրա
պատճառներն ու
հետեւանքները
աղավաղվել են երկու
երկրների ավտորիտար եւ
ոչ-դեմոկրատական
իշխող համակարգերի
կողմից, ինչի արդյունքում
հակամարտության
խաղաղ կարգավորման
հնարավորությունը, երկու
հասարակությունների



ընկալմամբ էլ, գրեթե
անհրական է դարձել:

Տարիներ շարունակ կոնֆլիկտի
մեջ ներգրավված կողմերի
իշխանությունները
օգտագործել են
հակամարտությունը, որպես
սեփական վերարտադրման
համար անհրաժեշտ լրացուցիչ
գործոն, իրենց իշխանությունը
հնարավորինս երկար պահելու
եւ իրենց երկրների
հասարակությունների

Պատկերը՝ © 2011 «Խաղաղության երկխոսություն»
հե-ի «Ավելին... ավելին...» տեսահոլովակից:
Նկարը՝ Լուսինե Գինոսյանի

ուշադրությունն անընդհատ
ծագող բազմաթիվ
խնդիրներից շեղելու համար:
Եվ չնայած 1994թ. կնքված
զինադադարի պայմանագրին,
մինչ այժմ զինադադարի
խախտման արդյունքում
բազմաթիվ միջադեպեր են
արձանագրվում, որոնք
հանգեցնում են Նորանոր
մարդկային (զինվորական եւ
քաղաքացիական)
կորուստների եւ միմյանց միջեւ
ատելության եւ թշնամանքի
Նոր ալիքի բարձրացմանը:

Հակամարտությունն ինքնին
մեծագույն խնդիր է երկու
հասարակությունների համար,
իսկ դրա շահարկումը
իշխանությունների կողմից
սեփական նպատակներով՝
հանգեցրել է բազմաթիվ
տնտեսական, քաղաքական
չլուծված խնդիրների, որոնք
անմիջականորեն կապված են
միմյանց հետ:

Բացի միջազգային եւ տեղական
զանազան հարթակներում
առավել հաճախ բարձրաձայնվող
անվտանգության խնդրից,
հակամարտության մեջ
ներգրավված
հասարակություններում առկա են
մարդու իրավունքների ոլորտում
քաղաքացիների չափազանց
բարձր խոցելիության եւ
անպաշտպանության,
քաղաքական եւ տնտեսական
դաշտերի մոնոպոլիզացման եւ մի
շարք այլ խնդիրներ: Հաճախ
հակամարտությունը
իշխանությունների կողմից
օգտագործվում է նաեւ որպես
միջոց՝ հասարակությունների
ուշադրությունը հրատապ
խնդիրներից շեղելու, կամ
սեփական անկարողությունն ու
անգործությունն արդարացնելու
համար:





Միլիտարիզացիան
 ներկայացվում
 է որպես մեծ ձեռքբերում,
 բյուջետային հսկայական
 հատկացումները ռազմական
 ոլորտին մեկնաբանվում են
 արտաքին թշնամուն
 դիմակայելու համար նորագույն
 ռազմատեխնիկա ձեռք բերելու
 անհրաժեշտությամբ: Տարբեր
 ոլորտներում բռնության եւ
 իրավախախտման դեպքերը,
 ինչպես նաեւ նման միջադեպերը
 զինված ուժերում, եւս
 արդարացվում եւ մեկնաբանվում
 են տիրահռչակ
 հակամարտության
 առկայությամբ:

Միեւնույն ժամանակ, իրերի
 նման դասավորության դեպքում,
 զարգացումներ կան, որոնք

հասարակական
 վերահսկողությունից դուրս են
 մնում: Մարդիկ հակված են
 «ներողամտությամբ» մոտենալու
 կայունության գրավական

հանդիսացող բանակում տեղի
 ունեցող մարդու իրավունքի
 խախտման դեպքերին.
 մեծամասնությունն այն կարծիքին
 է, որ աշխարհաքաղաքական
 իրավիճակի (շատերն են
 Հայաստանը համարում
 թշնամիներով շրջապատված)

պատճառով դրանք պետք է
 լռության մատնվեն
 անվտանգության
 նկատառումներով: Իսկ իշխող
 էլիտան խնդրի տաքուացումն ու
 հասարակական
 վերահսկողության պակասն
 օգտագործում է իր սեփական
 շահերի համար:

Այսպիսով, բանակը վերածվել է
 հակամարտության մեջ
 ներգրավված կողմերի
 ամենակոռումպացված
 կառույցներից մեկը:



Իսկ այն փաստը, որ մարդու իրավունքների վերականգնման եւ արդարադատության այլ ինստիտուտները եւ օդակները եւ թաղված են կոռուպցիայի մեջ, դատական համակարգն էլ անկախ չէ, գրեթե անհնարին է դարձնում ոտնահարված իրավունքները վերականգնելու հնարավորությունը:


Չնայած այն հանգամանքին, որ հայկական բանակում 2008-ից մինչեւ 2011թ. ընկած ժամանակահատվածում 187 զինծառայող զոհ է գնացել փաստացի ոչ պատերազմական իրավիճակում, միայն 25 զինվորի մահվան դեպքում է պատճառը զինադադարի ռեժիմի խախտումը¹, մյուս դեպքերում զինվորների մահվան պատճառ են հանդիսացել, այդ թվում՝ նաեւ բռնությունն ու կամայականությունները, ոչ կանոնադրական

փոխհարաբերությունները:

Համաձայն «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»-ի տվյալների, Հայկական բանակում 2012-ին գրանցված մահվան 49 դեպքերից միայն 12-ն է հրադադարի խախտման հետեւանքով, 11 ինքնասպանություն, զենքի հետ անզգույշ վարվելուց՝ 1 զոհ, 15 մահ՝ դժբախտ պատահարներից, 6 զինվոր մահացել է առողջական խնդիրներից եւ ոչ պատշաճ բժշկական օգնություն արդյունքում, մեկ սպանություն եւ 3 մահ՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետեւանքով: Ընդ որում, ինքնասպանություն որակված 3 դեպքերում ակնհայտ են եղել բռնության հետքերը: Չնայած որ այս վերոնկարագրյալ վտանգից զերծ չէ ոչ ոք, այն վերաբերվում է հազարավոր զինվորներին, զինապարտներին ու նրանց

ընտանիքներին, սակայն խնդիրը հայկական հասարակությունում մնում է չքննարկված: Ավելին, այս «մոռացված կոտորածը» երկրում դարձել է տաքուացված թեմա:

Մոնոպոլիզացնելով եւ օգտագործելով զանգվածային լրատվական համակարգը սեփական քարոզչության համար՝ հակամարտության մեջ ներգրավված երկրների իշխանությունները զրկել են մարդկանց ամբողջական եւ անաչառ լրատվություն ստանալու հնարավորությունից՝ տեղեկատվություն մատուցելով միայն իրենց ձեռնտու տարբերակով: Այլընտրանքային եւ անաչառ տեղեկատվության հասանելությունը հասցված է մինիմալի. փոքրիշատե անաչառ են միայն որոշ առցանց լրատվամիջոցներ:



1. <http://transparency.am/statement.php?id=66>



Հասարակության մեջ գրեթե զրոյի է հասցված անհատի դերն ու արժեքը՝ այն հնարավորինս հեշտ կառավարելու նպատակով: Վկայակոչելով մշակութային եւ ազգային արժեհամակարգը՝ մարդը դիտվում է որպես միասեռ հասարակության բաղադրիչ, իսկ բազմազանության եւ բազմակարծության ցանկացած դրսեւորում, ինչպես նաեւ փոփոխությունների եւ այլախոսության միտված ցանկացած նոր գաղափար կամ արժեք, դիտվում է որպես շեղում ազգային արժեհամակարգից կամ ներմուծված, ազգը քայքայող գործունեություն, որն անհրաժեշտ է անհապաղ ճնշել:

Միատարրությունը խրախուսվում է հատկապես սոցիալական եւ քաղաքական ոլորտներում, իսկ մարդն ընկալվում է ոչ թե որպես անհատ, այլ անդեմ էակ՝ օժտված միայն ազգային շահին ծառայելու պարտավորությամբ:

Օգտագործելով զանգվածային լրատվամիջոցները եւ, անգամ, կրթական համակարգը, տարբեր միջոցներով իշխանություն կրողները մշտապես հիշեցնում են քաղաքացիներին, որպես բարձրագույն արժեք, հայրենիքի հանդեպ վերջիններիս նվիրական սիրո եւ անվերապահ նվիրվածության ցուցաբերման անհրաժեշտության մասին: Պատերազմական իրավիճակում գտնվող երկրում ազգայնամոլությունը նույնականացվում է հայրենասիրության հետ, իսկ յուրաքանչյուր քննադատություն կամ քաղաքացիական անհնազանդության կոչ՝ պիտակավորվում որպես դավաճանություն, դիտվում որպես հայրենիքը «թշնամիներին վաճառելու» պատրաստակամություն:

Նույն զանգվածային լրատվամիջոցներով զօրուզիչեր



Ճադրանկարը՝ Տարոն Մարուքյանի քարոզվում են կանանց եւ տղամարդկանց սոցիալական դերերն ու պարտավորությունները՝ որպես միայն եւ միայն տվյալ էթնոսի առանձնահատկություններ, իսկ գեւորային հողի վրա կատարված բռնություն կամ իրավունքի ցանկացած ոտնահարում մեկնաբանվում է

որպես ազգային մշակույթի տարր, որոնց մասին բարձրաձայնելը նույնպես հակացուցված է: Ավելին, այդ երեւույթները հաճախ արդարացվում եւ սրբագրվում են հենց դրա զոհերի կողմից. հանդիսանալով տվյալ հասարակության արժեհամակարգի կրողը, զոհն անգամ չի համարձակվում կասկածի տակ դնել ընդունված եւ դարերով հաստատված հասարակական-բարոյական նորմերը:


Նման իրավիճակում, որտեղ բոլոր պայմանները ստեղծված են խոչընդոտելու անհատի՝ որպես իրավագիտակից եւ պահանջատեր քաղաքացու, կայացմանը, «ԽԵ» աշխատակազմը փորձում է աջակից լինել բոլոր նրանց, ովքեր ցանկացան եւ դեռ կցանկանան իր հետ անցնել այդ ճանապարհը:



«Ճիշտ հասկացված եւ ճիշտ օգտագործված ոչ բռնի պայքարը բավականին ներգործուն միջոց է:»

Մահաթմա Գանդի

Ի՞ՆՉ ՃԱՆԱՊԱՐՅ ԸՆՏՐԵՑԻՆՔ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎԻԶՄԻ
ՁԵԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ



2011-2012թթ. աշխատանքների իրականացման ճանապարհը բավականին հստակ էր սահմանված: Հաշվի առնելով առկա խնդիրները եւ հասարակական-քաղաքական համատեքստը, ակնկալվում էր, որ քաղաքացիական ակտիվիզմի տարրերից **քաղաքացիական կրթության, ոչ բռնի պայքարի եւ փոփոխությունների միտված երկխոսության** մեթոդները լավագույնս էին նպաստելու կազմակերպության չորս հիմնական ռազմավարական ուղղությունների՝ քաղաքացիական խաղաղասիրական ներուժի, մարդու իրավունքների եւ դեմոկրատական արժեքների հանդեպ հարգանքի ձեւավորման, քաղաքացիական խաղաղասիրական նախաձեռնությունների աջակցման եւ պատերազմից տուժածների շահերի պաշտպանության իրականացմանը:

- **Ոչ բռնի պայքար**
- **Կրթական բաղադրիչ**
- **Փոփոխություններին միտված երկխոսություն**



ՊԱՏԵՐԱՉՄԻՑ ՏՈՒԺԱՃՆԵՐԻ ԵՒ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՇԱՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՉ ԲՈՒՆԻ ՊԱՅՔԱՐ

ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

ՔԱՂԱՔԱՏԻԱԿԱՆ ԱԿՏԻՎԻԶՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԻՏՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՏԻԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՁԱԿՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՀԱՐԳԱՆՔԻ ՁԵՄԱՎՈՐՈՒՄ

ՔԱՂԱՔԱՏԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ





Ոչ բռնի պայքար

Րասարակական, տնտեսական, քաղաքական եւ բնապահպանական ոլորտներում բարեփոխումների հասնելու գործընթացում «ԻՆԵ» համար կարեւոր էր շարժվել ուժի չկիրառման ճանապարհով, ինչը եւ ընկած է կազմակերպության ողջ գործունեության հիմքում:

Խաղաղասիրական շարժման մասնակիցները չպետք է ունենան մեկ այլ սկզբունք, քան՝ խաղաղության հասնել միայն խաղաղ պայքարի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում ձգտած ազդեցություններին հասնելու համար ակտիվիզմի հայտնի բազմաթիվ քաղաղորհչներից ընտրվել են քաղաքացիների իրազեկման, քաղաքացիական անհնազանդության, խաղաղ երթերի, ակցիաների կազմակերպման, սոցիալական

տեսահղովակների պատրաստման, տնտեսական եւ քաղաքական համագործակցության բացառման (բոյկոտի), քաղաքացիական վերահսկողության սահմանման մեթոդները:

Երկու տարվա ընթացում համայնքի մի խումբ երիտասարդների ակտիվ մասնակցությամբ եւ, հիմնականում, վերջիններիս նախաձեռնությամբ, «Խաղաղության երկխոսությունը» ավելի քան 40 միջոցառում է իրականացրել ոչ միայն համայնքային, այլ՝ նաեւ ազգային եւ տարածաշրջանային մակարդակով:

Գործընկեր գերմանական OWEN հասարակական կազմակերպության աջակցությամբ, «Խաղաղության երկխոսության» ծրագրերի շրջանակներում, տեղական նախաձեռնություններ են իրականացվել նաեւ Ադրբեջանում եւ Լեռնային Ղարաբաղում:



Ոչ բռնի պայքար

Պատկերը՝ © 2012 «Խաղաղության
Երկխոսություն» հկ-ի
«Հայրենի՛ք, պաշտպանի՛ր
պաշտպանի՛ր» տեսահոլովակից:
Նկարը՝ Լուսինե Գինսոյանի

Խաղաղության հավելված 1



Ոչ բռնի պայքար

ԸՆՏՐԻՐ ԻՆՔՐ.
ՆՈՐ ՖԼԵՇ-ՄՈՒՎ ՎԱՆԱԶՈՐՈՒՄ

Այս գրությամբ թռուցիկներ էին բաժանում «Ընտրի՛ր ինքը» կարգախոսով ֆլեշմոբի մասնակիցները: «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Տեսնե՛նք, ընտրե՛նք, փոխե՛նք» ծրագրի շրջանակներում գործող ֆորում-թատրոն խմբի երիտասարդների կողմից կազմակերպված ֆլեշմոբին մասնակից դարձան նաև մի խումբ ակտիվ երիտասարդ վանաձորցիներ, ովքեր ցանկություն հայտնեցին համագործակցելու: Այն տեղի ունեցավ օգոստոսի 30-ին՝ Վանաձորի չորս բանուկ հատվածներում: Ֆլեշմոբը կազմակերպված էր Վանաձորի ՏԻՄ և համայնքի ղեկավարի ընտրություններին ընդառաջ: Հիմնական նպատակը նախապես կազմվող ցուցակների բացառումն էր՝ խթանելով արդար եւ անկախ ընտրություններ կամքի ազատ արտահայտման մթնոլորտում:

Ֆլեշմոբի սկզբում «թեկնածուն» պահանջում է բերել նախապես ցուցակագրված իր «քվեները»: Նրանք գալիս են՝ միմյանց շղթայված: Թեկնածուն ստիպողաբար նրանց տանում է իր հետ,

բայց «քվեները» հասկանում են իրենց սխալը և ազատվում թեկնածուի կապանքերից: Ազատվում են և արագությամբ բաժանում թռուցիկներ: Ֆլեշմոբի ընթացքում մասնակիցները դիմակներով էին՝ ուշադրություն գրավելու և ավելի հետաքրքիր դարձնելու համար:

Մենք կարող ենք փոխել»։ այս համոզմունքն ունեին այն ակտիվ երիտասարդները, որոնք պատրաստակա գտնվեցին ֆլեշմոբին մասնակցելու համար: Մասնակիցներից մեկի՝ Մանեի տպավորությամբ սա իր համար հիանալի առիթ էր բողոքի ձայն բարձրացնելու և իր սպագայի համար պայքարելու. «Ուզում եմ, որ մարդիկ ամենայն լրջությամբ վերաբերվեն քաղաքական ընտրություններին և իրենց ու իրենց զավակների սպագայի համար պատասխանատվություն զգան»:

Սամվելը՝ թեկնածուի դերակատարը, իր մասնակցության հիմնական պատճառը համարեց իր շուրջը տիրող անարդարությունները փոխելու նկատմամբ հավատը: Իսկ քննարկման ավարտին կազմակերպչական խմբի անդամ Գոռն ասաց. «Ես հավատում եմ, որ կգա մի ժամանակ, երբ ընտրողներն առանց ցուցակների, առանց ընտրակաշառքների և տարբեր



հավելված 2

Ծրագրի գերմանական գործընկերն է՝ «Օվեն» իկ-ն (OWEN - Mobile Akademie für Geschlechterdemokratie und Friedensförderung e.V.)

«Տեսնե՛նք, ընտրե՛նք, փոխե՛նք...» ծրագիրն իրականացվում է Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) "zivik" ծրագրի աջակցությամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

խոստումների կընտրեն իրենց թեկնածուին: Մենք դրա՛ համար ենք պայքարում»:

Հեղինակներ՝ Յանա Հովհաննիսյան, Համիկ Կիրակոսյան



Քաղաքացիական կրթություն

Կարևորելով կրթական բաղադրիչը, խաղաղասիրական շարժման մեջ ներգրավված ակտիվ երիտասարդների մոտ վերլուծական և քննադատական կարողությունների ձեւավորման համար ընտրված մեթոդները պետք է հնարավորություն տային վերջիններիս վեր հանելու և բարձրաձայնելու հասարակության մեջ առկա արգելված խորքային խնդիրները՝ սրբագրված մշակութային արժեքներով, որոնք սակայն իրենց մեջ պարունակում են բռնության և մարդու իրավունքների ոտնահարման ու խախտման բազմաթիվ տարրեր: Ընտրվեցին այնպիսի մեթոդներ, որոնց կիրառումը հարթակ կստեղծեր այդ խնդիրները ոչ բռնի ճանապարհով լուծելու համար:

Երկրում և տարածաշրջանում

առկա հասարակական, տնտեսական և քաղաքական իրավիճակը, ինչպես նաև կազմակերպության՝ նախորդ տարիների ընթացքում ձեռք բերած փորձը հիմք հանդիսացան, որ թատերական գործիքներն ընտրվեն որպես առավել արդյունավետ և կիրառելի գործիքներ՝ հատկապես երիտասարդական խաղաղասիրական աշխատանքում: Ուստի «ԽԵ» գործունեության հիմքում ընկան բրազիլացիներ Պաուլո Ֆրեյրեի ճնշվածների մանկավարժության և քաղաքական-հասարակական գործիչ Ավգուստո Բոալի թատերական մեթոդները: Դրա համար առկա էին առնվազն երկու դրդապատճառ: Նախ՝ այդ մեթոդները բավականին հետաքրքիր էին և ակտիվությունը խթանող, իսկ դրանց կիրառումը թույլ էր տալիս բարձրաձայնել



Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» միջազգային կազմակերպության փորձագետ-խորհրդատու Դենիս Մատվեև

անգամ ամենատարուացված թեմաները, խնդիրն աչյէլ աչլ հարթություններից, ինչպես նաև՝ քննարկել ու վերհանել հակամարտության մեջ ներգրավված տարբեր կողմերի հետաքրքրություններն ու

պահանջմունքները, երկրորդ՝ այն նվազեցնում էր ագրեսիայի առաջացման հնարավորությունը առկա ավտորիտար-ռեպրեսիվ քաղաքական համատեքստում:



Քաղաքացիական կրթություն

Կազմակերպության գործունեության հետ համախոհ երիտասարդներից շատերը՝ Հայաստանից, Ադրբեջանից եւ Լեռնային Ղարաբաղից, կազմակերպության «Տեսնե՛նք, ընտրե՛նք, փոխե՛նք...» եռամյա ծրագրի շրջանակներում հնարավորություն ունեցան ծանոթանալու «Ֆորում-թատրոնի» եւ «Թերթ-թատրոնի» գործիքների հետ, որոնք հետագայում լայնորեն կիրառեցին իրենց տեղական նախաձեռնություններում:

2012թ. կրթական բաղադրիչների շրջանակն ընդլայնվեց՝ հիմնվելով անմիջականորեն շարժման մասնակիցների կարիքների եւ հետաքրքրությունների վրա: Այս առումով ակտիվիստների համար մեծ արդյունավետություն ունեցավ կոնֆլիկտների տրանսֆորմացիայի

գործիքների հետ ծանոթացումը համանուն դասընթացի ժամանակ:

Կազմակերպության ծրագրերի եւ երիտասարդական նախաձեռնությունների արդյունքում կազմակերպվել են դասընթացներ եւ աշխատանքային քննարկումներ՝ նվիրված կանանց եւ տղամարդկանց սոցիալական դերերի, դրանց վրա հասարակական լրատվամիջոցների ունեցած ազդեցության, մարդու իրավունքների ու քաղաքացիական ակտիվիզմի, Հայաստանում առկա Էկոլոգիական խնդիրների մասին քաղաքացիների իրազեկման, այլընտրանքային լրագրության եւ նորագույն տեխնոլոգիաների՝ քաղաքացիական ակտիվիզմում կիրառման թեմաներով:

«Խաղաղությունն ամենամայա, ամենօրյա գործընթաց է, որն աստիճանաբար փոխում է կարծիքները, դանդաղորեն կործանում է խոչընդոտները՝ անաղմուկ կերպով կառուցելով նորը:»

Ջ. Քենեդի



Թատերական մեթոդների դասընթացավար Հարալդ Հան



Երկխոսություն

Յակամարտության մեջ ներգրավված կողմերի միջև երկխոսության ապահովումը «ԽԵ» աշխատակազմը համարում է խաղաղության կառուցման ամենակարեւոր գործիքներից մեկը:

Այնտեղ, որտեղ հաղորդակցությունը խափանված է, երկխոսությունն ձեւավորելը, կազմակերպության աշխատակազմի կարծիքով, լավագույն միջոցն է դեմ առ դեմ հաղորդակցումն ապահովելու համար: Իր գործունեության ընթացքում կազմակերպության համար կարեւոր էր այնպիսի ապահով տարածք ստեղծել հակամարտության մեջ ներգրավված կողմերի ներկայացուցիչների համար, որտեղ նրանք կարող էին հանդիպել՝ հաղթահարելով իրենց մեջ ողջ



Նկ. Տաթև Հովհաննիսյան, Մարինա Գրասետ, Վահագն Անտոնյան

լարվածությունն ու նախատրամադրվածությունը: Երկխոսության հնարավորությունը «ԽԵ»-ն դիտում է որպես նախնական քայլ նոր հարաբերությունների կառուցման, սեփական պահանջմունքների բարձրաձայնման, դիմացինի կարիքների բացահայտման գործընթացում:

Յուրաքանչյուր երկխոսություն, ընդ որում, դիտվում է որպես եզակի՝ որոշակի սոցիալ-քաղաքական համատեքստի մեջ:

Փոփոխություններին միտված երկխոսության ձեւավորումը համայնքային, ազգային եւ տարածաշրջանային հակամարտությունների մեջ ներգրավված կողմերի միջև սկսվեց անհատական մակարդակից: Աշխատակազմը համոզված էր, որ փոփոխությունը հնարավոր է սկսել միայն անհատական գիտակցությունից, ինչն էլ, արդյունքում, կհանգեցնի վարքագծային փոփոխության:

Առաջնահերթությունն սահմանելով լռության մշակույթի հաղթահարումն այնպիսի հասարակություններում, որտեղ բռնությունը երկար տարիներ բնութագրվել է որպես ավանդույթ կամ մշակութային արժեք, կազմակերպությունն անփոխարինելի համարեց երկխոսության կառուցումը՝ որպես ամենաարդյունավետ գործիք հիմնախնդիրները բարձրաձայնելու եւ լուծումներ փնտրելու համար:

Երկխոսության ձեւավորման համար, կիրառելով մի շարք թատերական մեթոդներ եւ նախաձեռնելով կինոդիտում-քննարկումներ տարբեր սոցիալական եւ քաղաքական թեմաներով, հարթակ ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված հասարակությունների երիտասարդների համար բարձրաձայնելու իրենց առօրյա խնդիրները, տարբեր հարցերի շուրջ ընկալումներով փոխանակվելու իրենց հասակակիցների հետ, ինչպես նաեւ՝ ծանոթանալու հակամարտության վերաբերյալ կողմերի պատմություններին, ընկալումներին, ապրումներին եւ ակնկալիքներին:



Երկխոսություն

ԱՎԱՐՏՎԵՑ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՑԱՆՑԻ» ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐՏՈՒԿ ԵՒ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱԼ ՄԻՋՑՈՎ» ԾՐԱԳԻՐԸ

2011 թվականի մայիսին մեկնարկեց «Երիտասարդների մասնակցությունը վիրտուալ եւ միջմշակութային երկխոսության միջոցով» ծրագիրը, որն իրականացվում էր «Երիտասարդ խաղաղասերների միացյալ ցանցի» կողմից (Նիդեռլանդներ): Ծրագրի նպատակն է՝ համախմբել հետաքրքրված երիտասարդներին ամբողջ Եվրոպայից, նրանց գործիքներ ու կարողություններ տալ՝ հասարակության փոփոխման գործընթացին նրանց ակտիվ մասնակցության համար, վերլուծել, քննարկել ու մեծացնել երիտասարդների դերն այդ գործում՝ գործնական հետազոտությունների եւ քաղաքացիական շահերի պաշտպանության միջոցով:

Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության երիտասարդական հիմնադրամի կողմից, իրականացվել՝ համագործակցելով

«Երիտասարդ խաղաղասերների միացյալ ցանցի» անդամ կազմակերպությունների հետ՝ Իսպանիայից, Իտալիայից, Բելգիայից, Նիդեռլանդներից, Հայաստանից, Վրաստանից, Ռումինիայից, Ադրբեջանից ու Թուրքիայից: Ծրագիրը ներառում էր 3 հիմնական փուլեր. գործնական ուսումնասիրություն երիտասարդների ներգրավվածության եւ միջմշակութային երկխոսության վերաբերյալ, հնգօրյա դասընթաց եւ հետագա հանդիպումներ տեղական մակարդակում՝ ուսումնասիրությունների արդյունքներն ու հանձնարարականները տարածելու համար: Ինը երկրներից ընդգրկված երիտասարդները փոքրիկ ուսումնասիրություններ էին կատարել իրենց երկրի, քաղաքի կամ համայնքի վրա ազդող այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք էին միջմշակութային երկխոսությունն ու խաղաղությունը, քաղաքացիական ծրագրերում երիտասարդների ներգրավվածությունը, գենդերը, ազգային փոքրամասնությունները, մարդու իրավունքներն ու խտրականությունները:

Հուլիսին Նիդեռլանդներում անցկացված դասընթացի ժամանակ՝ ծրագրի երկրորդ փուլում, մասնակիցները տեղեկություններ ստացան կոնֆլիկտի վերլուծման եւ քաղաքացիական շահերի պաշտպանության մի քանի գործիքների

հավելված 3



(կոնֆլիկտների քարտեզագրում եւ SWOT վերլուծություն) մասին ու գործնականում կիրառեցին ստացած հմտությունները:

Ներկայում ծրագիրն ավարտված է: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «խաղաղության երկխոսություն»-ի եւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանսաձորի գրասենյակի կամավորներից բաղկացած հայաստանյան խումբը հանդիպում-քննարկումներ կազմակերպեց Լոռու մարզի Վանսաձոր, Ստեփանավան եւ Ալավերդի քաղաքների ուսանողների հետ:

Քննարկումների հիմնական թեմաներն էին հակամարտությունը, բռնությունները, բանակցային հմտություններն ու

հակամարտությունների կարգավորման ընթացքում երիտասարդների մասնակցությունը: Աշխատանքային քննարկումների ընթացքում քննարկվեցին հակամարտություններին կամ բռնությանը վերաբերող մասնակիցների ունեցած սեփական փորձը, որոնք ներկայացվում էին թատերական բեմականացումների միջոցով՝ փոքր խմբերում: Իսկ դասընթացի երկրորդ հատվածում երիտասարդները վերոնշյալ թեմաների վերաբերյալ ավելի ծավալուն գիտելիքներ ստացան: Նրանք նաեւ տեղեկացվեցին միջազգային ու տեղական մի շարք կայքերի ու բլոգների մասին (որպես երիտասարդական խաղաղասիրական շահերի պաշտպանության գործիքներ):

«Երիտասարդների մասնակցությունը վիրտուալ եւ միջմշակութային երկխոսության միջոցով» ծրագրի ավարտից հետո «Երիտասարդ խաղաղասերների միացյալ ցանցը» նախատեսում է ծրագրի մասնակիցների հետ համատեղ իրատարակել գրքույկ՝ կիսվել երիտասարդների՝ իրենց համայնքներում անցկացրած տեղական ծրագրերի ընթացքում ձեռք բերած փորձով:



Երկխոսություն

հավելված 4

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄՈՔԻԼԻԶԱՑՈՒՄ». ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

2012 թ.-ի հունիսի 6-13-ը Թբիլիսիում կայացավ «Երիտասարդների մոբիլիզացում» թեմայով հանդիպում, որին մասնակցում էին խաղաղասիրության բնագավառում գործունեությամբ հետաքրքրված 23

մասնակիցներ՝ Վանաձորից, Երեւանից, Ստեփանակերտից, Բաքվից, Բոսնիա եւ Հերցեգովինայի Սանսկի Մոսո քաղաքից եւ Բեռլինից: Հանդիպումը կազմակերպվել էր Վանաձորի «Խաղաղության երկխոսություն» հկ-ի եւ Նրա գերմանական գործընկերOWEN կազմակերպության կողմից: Բոսնիական Սանսկի Մոսոից ժամանած հյուրերը՝ Վահիդին Օմանովիչն ու Մեկուղին

Ռահմանովիչը ներկայացրեցին մասնակիցներին խաղաղամիրական բնագավառում ունեցած իրենց՝ «Խաղաղասիրական կենտրոն» կազմակերպության փորձը, հիմնադրման պատմությունը, իրենց երկրում ընթացած պատերազմի ընթացքում եւ դրա ավարտից հետո ունեցած իրենց անձնական պատմությունները կիսեցին, պատմեցին, թե ինչ հանգամանքներ ստիպեցին իրենց հիմնադրել կազմակերպությունն ու նման գործունեություն ծավալել:

«Խաղաղության երկխոսություն»-ն ու «Խաղաղասիրության կենտրոն»-ը ներկայացրեցին նաեւ Երիտասարդության մոբիլիզացիայի բնագավառում ունեցած իրենց ռազմավարությունը, իրականացրած գործողություններն ու փորձը, որից հետո մասնակիցները քննարկեցին լսածը, ինչպես նաեւ՝ թե ներկայացվածից ինչը կարելի է օգտագործել ամենօրյա գործունեության մեջ՝ իրենց համայնքներում:

Մարինա Գրասսեն OWEN-ից, նկատեց հանդիպման ընթացքում. «Սա իմ առաջին նման հանդիպումն էր եւ ես շատ ուրախ եմ՝ տեսնելով, որ չնայած

հանդիպման սկզբնական լարվածությանը, հանդիպման վերջում արդեն մասնակիցներից ոմանք մտածում էին համատեղ հետագա գործունեության, համատեղ նախաձեռնությունների վրա»: Իսկ ըստ «Խաղաղության երկխոսություն» հկ-ի նախագահ Էդգար Խաչատրյանի, այն մասնակիցները, որոնք հետաքրքրություն կցուցաբերեն կազմակերպության «Տեսնե՛նք, Ընտրե՛նք, Փոխե՛նք...» ծրագրի նկատմամբ եւ ցանկություն կունենան միացնել իրենց ջանքերը դրա շրջանակներում՝ առաջիկայում կիրավորվեն ներկա գտնվելու այս փուլում նախատեսված երկրորդ աշխատանքային հանդիպմանը: Այս անգամ մասնակիցները կծանոթանան «Ճշգլվածների թատրոն»-ի գործիքներին՝ որպես քննադատական մտածելակերպի ձեւավորման, երիտասարդների ակտիվացման միջոց:

Ծրագրի գերմանական գործընկերն է՝ «Օվեն» հկ-ն (OWEN - Mobile Akademie für Geschlechterdemokratie und Friedensförderung e.V.)

«Տեսնե՛նք, ընտրե՛նք, փոխե՛նք...» ծրագիրն իրականացվում է Գերմանիայի դաշնության արտաքին վչակության լիազորված գերմանական կազմակերպության արտաքին գործերի նախարարության միջոցներով:





ՎՐԿՆԵՔ ԹԵՂՈՒՏԸ

«Մի օր մենք կհասնենք այն բանին, որ կտեսնենք՝ խաղաղությունն այլևս անհասանելի նպատակ չէ, այլ ընդամենն այն միջոցների ամբողջությունն է, որոնցով ձգտում ենք հասնել այդ խաղաղությանը: Խաղաղության հարկ է ձգտել խաղաղ միջոցներով:»

Մարտին Լյութեր Քինգ

Ի՞ՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆՔ
ԶԳՏԵԼ ՎԵՐՁԻՆ ԵՐԿՈՒ
ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Ի՞ՆՉ ԴԱՍԵՐ ԵՆՔ ՔԱՂԵԼ

Յաշվետու ժամանակահատվածում «ԽԵ» աշխատակազմը փորձել է իր նախանշած ազդեցություններին հասնել՝ իրականացնելով երկու երկարաժամկետ ծրագիր, որոնք նախատեսում է շարունակել նաև այս՝ 2013 թվականին:

«Տեսնե՛նք, ընտրե՛նք, փոխե՛նք...» եռամյա ծրագիրը, որի հիքում ընկած է կազմակերպության «Տեսնե՛նք՝ ով ենք մենք, ընտրե՛նք՝ ով ենք ուզում լինել» ռազմավարության փիլիսոփայությունը, իրականացման առաջին տարում կրել է տեղական բնույթ: Ծրագրի երկրորդ տարում եւ, նախատեսվում է, երրորդ տարվա ընթացքում էլ, կազմակերպությունն աշխատանքներ է տանում տարածաշրջանային մակարդակում՝ համագործակցելով Լեռնային

Ղարաբաղի հակամարտության մեջ անմիջականորեն ներգրավված բոլոր կողմերի երիտասարդների հետ:

Ադրբեջանում ծրագիրն իրականացվել է գերմանական գործընկեր OWEN կազմակերպության աջակցությամբ:

Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի Դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) "zivik" ծրագրի աջակցությամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

«Երիտասարդ առաջնորդները՝ հանուն խաղաղության» ծրագրի աշխատանքներն սկսվել են 2010թ. նոյեմբերից եւ իրագործվել մինչեւ 2011թ. հուլիս ամիսը: Ծրագրի հաջորդ փուլը նախատեսված է 2013-2015թթ. համար: Տարածաշրջանում այն


իրականացվում է ֆիննական «Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, որը նախաձեռնվել է «Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եվրոպական գործընկերության» շրջանակներում:

Նշված ժամանակահատվածում կազմակերպությունը բազմիցս համագործակցել է տեղական, տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր քաղաքացիական նախաձեռնությունների եւ խմբերի հետ:

Անցած երկու տարիների ընթացքում աշխատանքներն ընթացել են 18-35 տարեկան երիտասարդ վանաձորցիների,

ինչպես նաև՝ Չայաստանի տարբեր համայնքներում բնակվող երիտասարդների հետ, որոնց ներգրավմամբ եւ անմիջական մասնակցությամբ փորձ է արվել ազդեցության հասնել տարբեր դպրոցահասակ, ուսանողական, մշակութային եւ այլ երիտասարդական խմբերի շրջանակներում: Երկու տարիների ընթացքում տեղական մակարդակով ավելի քան **300 երիտասարդներ** են ներգրավված եղել «ԽԵ» կողմից իրականացված նախաձեռնություններում:

Իսկ 2012թ., ընդլայնելով գործունեության շրջանակը, գործընկերների միջոցով երիտասարդական ակտիվ խմբեր ենք ձեւավորել նաև Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանում:



2011-2012թթ-ին
իրականացված
բազմաթիվ
գործուղությունների
արդյունքում «ԽԵ»-ն մի
շարք ազդեցությունների
է հասել տեղական,
ազգային եւ
տարածաշրջանային
մակարդակներում:

Այս համատեքստում
կազմակերպությունը եւ
կազմակերպության
անդամները եւս
ենթարկվել են այդ
փոփոխությունների
ազդեցությունը:

«Խաղաղության երկխոսությունը» տարբեր ոլորտներում դարձել է Վանաձորում գործող առաջատար կազմակերպություն, հատկապես՝ քաղաքացիական ակտիվիզմի ոլորտում: Կազմակերպությունը դարձել է հարթակ վանաձորի երիտասարդների համար, որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն ունի հանդես գալու իր նախաձեռնությամբ եւ ստանալ համապատասխան աջակցություն, եթե այն չի հակասում խաղաղության կառուցման՝ աշխատակազմի որդեգրած սկզբունքներին: Գործունեության արդյունքում կազմակերպությունը ճանաչում է ձեռք բերել եւ ստացել համագործակցության բազմաթիվ առաջարկներ տեղական, տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպությունների կողմից:

«Խաղաղության երկխոսությունը» հանդիսանում է այն հարթակը, որտեղ վանաձորի երիտասարդները հնարավորություն ունեն ինքնարտահայտման, ինքնառեւիզացման, ինչպես նաեւ՝ ծանոթանալու ընթացիկ քաղաքական եւ հասարակական իրադարձություններին:

Վանաձոր քաղաքում ձեւավորվել է երիտասարդ ակտիվիստների մի խումբ, ովքեր օժտված են վերլուծական կարողություններով, հասկանում են երկրում եւ տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, զոհը չեն պետական եւ ազգայնամոլական քարոզչության ազդեցության եւ կարողանում են արտահայտել սեփական կարծիքը: Ինչպես նաեւ գիտակցում են իրենց՝ իրավագիտակից եւ պահանջատեր քաղաքացու, դերն ու կարեւորությունը, մշտապես հանդես են գալիս սեփական նախաձեռնություններով:

Վանաձորի երիտասարդների շրջանում ձեւավորվել է հավատ եւ դրական տրամադրվածություն փոփոխությունների հանդեպ:

Մի խումբ երիտասարդներ Հայաստանի տարբեր քաղաքներից (Եղեգնաձոր, Սպիտակ, Զրազդան, Ջերմուկ, Ալավերդի) հնարավորություն են ունեցել որոշակիորեն զարգացնելու իրենց կարողությունները:

«Խաղաղության երկխոսության» ակտիվիստները, համագործակցելով Երեւանում գործող մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ «Բանակն իրականում» եւ «Փրկենք Թեղուտը» քաղաքացիական նախաձեռնությունների հետ, դարձել են Վանաձորում այդ խմբերի առաջատար գաղափարակիցներն ու աջակիցները:

Ձեւավորվել է երկխոսություն եւ համագործակցություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված կողմերի մի խումբ երիտասարդների միջեւ: Այս առումով, հակամարտության կողմերի եւ այլազգիների մոտ կոտրվել են այն կարծրատիպերը, որ անհնար է որեւէ խաղաղ երկխոսություն հակամարտության կողմերի միջեւ:

Ստեփանակերտում եւ Բաքվում եւս ձեւավորվել են փոքր երիտասարդական խմբեր, ովքեր անտարբեր չեն ընթացիկ սոցիալ-քաղաքական գործընթացներին:

Գործընկերների աջակցությամբ կազմակերպությունը հնարավորություն է ստեղծել Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի երիտասարդների համար հանդիպելու, բարձրաձայնելու եւ քննարկելու այդ թվում՝ նաեւ հակամարտության խաղաղ կարգավորմանն առնչվող, թեմաներ, կիսել իրենց ընկալումները:



Վերջին երկու տարիների ընթացքում կատարած աշխատանքներն ու արդյունքում կուտակած փորձը «ԽԵ» համար հիմք հանդիսացավ իր հետագա գործունեության առավել արդյունավետ պլանավորման եւ համապատասխան մեթոդների ընտրության համար:

Ստորեւ ներկայացվում են մի քանի կետեր, որոնց առանձնակի ուշադրություն կդարձվի հետագա աշխատանքի ժամանակ:

Վերոնշյալ սոցիալ-քաղաքական իրավիճակում եւ արժեհամակարգի պայմաններում, երիտասարդների ակտիվացման եւ խաղաղասիրական շարժման մեջ ներգրավման համար թատերական մեթոդները հանդիսանում են բավականին արդյունավետ եւ ազդեցիկ գործիք:

Ինքնառեալիզացման հարթակի ստեղծումը եւ երկխոսության ձեւավորումը արդյունավետ միջոցներ են երիտասարդների մոբիլիզացիայի եւ քաղաքացիական ակտիվիզմի մեջ ներգրավելու համար:

Անհրաժեշտ է աշխատել երիտասարդների մոտ դեռեւս ամկա կոլեկտիվիզմի ոգու դեմ, նախկին խորհրդային վերապրուկների փոփոխության ուղղությամբ, երբ անհատի դերը խիստ նվազեցված է եւ կարեւորվում են միայն կոլեկտիվ ընկալումներն ու մոտեցումները:

Որեւէ նախաձեռնությամբ հանդես գալու համար կարելու է, որպեսզի երիտասարդներն զգան համախոհների ամկայություն եւ աջակցություն, ինչպես նաեւ՝ նրանց մոտ մեծ ոգեւորություն կարող են առաջացնել համանման գործողությունների հաջող նախադեպերը:

Որեւէ խնդրի շուրջ երիտասարդներին մոբիլիզացնելու եւ ակտիվացնելու համար անհրաժեշտ է, որ վերջիններս հաստակ պատերացում ունենան, թե խնդիրը ինչքանով է առնչվում իրենց պահանջմունքների հետ եւ որքանով է արդիական իրենց համար:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հասարակության մեջ ամկա շատ տաբուացված խնդիրներ, շատ հաճախ, չեն ընկալվում որպես խնդիր, գիտակցական մակարդակում այս հարցերի շուրջ որեւէ փոփոխության հասնելու համար երկարաժամկետ եւ համբերատար աշխատանք է պահանջվում:

Համախմբելով երիտասարդներին որեւէ հարցի շուրջ՝ կարելու է ի սկզբանե հստակ պատկերացում ձեւավորել վերջիններիս մոտ խնդրի բուն էության, այն հաղթահարելուն ուղղված հիմնական մեթոդների եւ վերջիններիս դերի մասին՝ խոսափելու համար հետագա թյուր ընկալումներից եւ հիասթափություններից:

Կարելու է ապահովել մշտական կապը եւ կառուցողական երկխոսությունը հակամարտության մեջ ներգրավված կողմերի երիտասարդների միջեւ:



NEWS



**ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.
ԻՆՉԻ՞ ԵՆՔ ՁԳՏՈՒՄ
ՀԱՍՆԵԼ 2013-ԻՆ**

Պատկերը՝ © 2012 «Խաղաղության երկխոսություն» հկ-ի
«SWEN» տեսահոլովակից:
Նկարը՝ Նարեկ Կարողայանի

Յիմնվելով նախորդ տարիների փորձի, քաղաճ դասերի եւ ուսումնասիրությունների վրա՝ 2013թ-ին կազմակերպությունը կձգտի հասնել հետեւյալ արդյունքներին.

- **Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված կողմերի երիտասարդների մոտ պատմության նկատմամբ քննադատական ընկալման կարողություններ զարգացնելուն:**
- **Չինված ուժերում առկա մարդու իրավունքների ոտհանարումների եւ բռնությունների հանդեպ հասարակության իրազեկման, հասարակական անտարբերության հաղթահարմանն ու միջադեպերի թափանցիկ եւ արդարացի հանգուցալուծման:**
- **Էկոլագիական խնդիրների հանդեպ հասարակական**



իրազեկման, խնդիրների բարձրաձայնմանն ու սույն ոլորտում որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների ակտիվ մասնակցության:

Վերոհիշյալ արդյունքներին հասնելու համար նախատեսվում է համապատասխան գործուղություններ իրականացնել «ԽԵ» եւ գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ մի շարք ծրագրերի շրջանակներում:

Իր «**Տեսնե՛նք, ընտրե՛նք, փոխե՛նք...**» ծրագրի շրջանակներում, հիմնվելով խաղաղության եւ հակամարտության վերաբերյալ անհատական եւ միջանձնային փոփոխությունների վրա, կազմակերպությունը շարունակելու է զարգացնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված կողմերի

երիտասարդների խաղաղասիրական ներուժը, ինչպես նաեւ՝ փորձելու է երիտասարդների մոտ զարգացնել պատմության նկատմամբ քննադատական-վերլուծական կարողություններ, որպեսզի նրանք հանդես գան որպես կարելու դերակատարներ՝ պատմական հիշողությունների հավաքագրման գործընթացում:

Կազմակերպության աշխատակազմի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցանկացած հակամարտության դեպքում կողմերը պատմությունը միշտ օգտագործում են թյուր ընկալումներ ստեղծելու, ազգայնամոլական գաղափարները երիցս վառ պահելու համար:




Այս առումով կարելու է, որպեսզի երիտասարդները հասկանան իրենց դերի կարեւորությունը իրական եւ անաչառ պատմությունների արձանագրման եւ փոխանցման գործում: Այսպիսով, կազմակերպությունը նախատեսում է երիտասարդներին տալ փաստագրական ֆիլմերի պատրաստման կարողություններ, որպեսզի վերջիններս իրականությունը ներկայացնող իրենց սեփական ուժերով հայթայթած իրական պատմություններով հանդես գալու հնարավորություն ունենան: Գործընթացում կներգրավվեն երիտասարդներ Հայաստանից, Ադրբեջանից եւ Լեռնային Ղարաբաղից: Բացի այդ, նմանատիպ աշխատանքներ կիրականացվի նաեւ «ԽԵ» գերմանական գործընկեր Բերգհոֆ հիմնադրամի՝ տարածաշրջանում իրագործվող «Մանուշակագույն գործընթաց» ծրագրի շրջանակներում:



Ֆիննական «**Տգնաժամերի կառավարման նախաձեռնություն**» կազմակերպության կողմից եւ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եվրոպական գործընկերության» (EPNK) շրջանակներում իրականացվող «**Երիտասարդ առաջնորդները՝ հանուն խաղաղության**»

ծրագրի հետ համագործակցությունը շարունակելով, «ԽԵ»-ն նպաստելու է, որպեսզի երիտասարդները գիտակցեն խաղաղասիրական գործընթացներում, որպես ակտիվ դերակատարի, իրենց նշանակությունն ու խաղաղասիրական նախաձեռնություններով հանդես գալու կարեւորությունը: Կիրառելով նոր մեթոդոլոգիաներ՝ ծրագիրը նախատեսում է նաեւ ընդլայնել ծրագրում ներգրավված շահառուների շրջանակները, աջակցել վստահության կառուցմանը հակամարտության կողմերի միջեւ եւ երիտասարդների ու որոշում կայացողների միջեւ հանդիպումներ կազմակերպել ազգային եւ միջազգային մակարդակներում՝ այդ կերպ երկխոսություն կառուցելով եւ երիտասարդներին հաղորդակից դարձնելով հակամարտության կարգավորման ընթացիկ գործընթացներին:

Վերջին տարիներին Հայաստանում բավականին այժմեական են դարձել բնապահպանական թեմաները: Մոնոպոլիզացված եւ օրենքի, մի շարք միջազգային համաձայնագրերի ու բնապահպանական նորմերի բազմաթիվ խախտումներով իրականացվող երկրի բնական պաշարների շահագործումը առաջացրել է մի խումբ քաղաքացիների դժգոհությունը, ինչի արդյունքում ձեւավորվել են մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ, որոնց անդամները պահանջում են երկրի իշխանություններից գործել ՀՀ օրենքի սահմաններում, ինչպես նաեւ՝ ելնելով տեղական կարիքներից, հանքի շահագործման եւ բնության պահպանման նպատակահարմարությունից:



Բնապահպանական հիմնախնդիրներից հատկապես ուշադրության է արժանի Հայաստանի հյուսիսում գտնվող Թեղուտի պղնձամոլիբդենային հանքի շահագործումը: 2001թ.-ին Հայաստանի կառավարության անօրինական որոշմամբ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը ստացել է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքը 25 տարով շահագործելու թույլտվություն: ՀՀ կառավարությունը թույլ է տվել հանքի շահագործումը՝ խախտելով ՀՀ օրենքը եւ մի շարք միջազգային համաձայնագրեր:

Հանքարդյունաբերական ծրագրով սկզբնական փուլում նախատեսվում է հատել 357 հա անտառ, ինչը մեծ բնապահպանական աղետ է ոչ միայն Հայաստանի, այլև ողջ տարածաշրջանի համար: Հանքարդյունաբերության արդյունքում առաջանալու է 500

մլն հեղուկ թունավոր թափոն և 600 մլն կարծր այլ տեսակի վտանգավոր թափոններ, ոչնչանալու են շուրջ 400 բուսա եւ կենդանատեսակներ: Մեծ է նաեւ մարդու առողջությանը հասանելիք վտանգը: Բնապահպան ակտիվիստների պայքարն ուղղված է ՀՀ կառավարության անօրինական որոշման դեմ եւ նպատակ ունի հասնելու հանքարդյունաբերության արդյունքում բնությանը սպառնացող վտանգի կանխմանը:

2012թ.-ից «ԽԵ»-ն ակտիվ մասնակցություն է ունեցել բնապահպանական խնդիրների բարձրաձայնման եւ հասարակության իրազեկման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Այս առիթով «ԽԵ» աշխատակիցներն ու կամավորները կազմակերպել են եւ շարունակելու են կազմակերպել բազմաթիվ միջոցառումներ, հանդիպումներ եւ բողոքի

ակցիաներ, ինչպես նաեւ՝ աջակցել երիտասարդների շրջանում Էկո-ակտիվիզմի ձեւավորմանը եւ զարգացմանը: Այս ուղղությամբ կշարունակենք աշխատել գերմանական **MitOst, CRISP** եւ վրացական **IRIS GROUP** կազմակերպությունների, ինչպես նաեւ՝ երեւանյան «**Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտի**» եւ Գյումրիի «**Ասպարեզ**» ակումբի հետ:

Համատեղ «**ԷկոԼաք**» ծրագրի շրջանակներում հատկապես շեշտը կդրվի Հայաստանում Էկոլոգիական ակտիվիզմի խթանման եւ հետագա զարգացման վրա: Ակնկալվում է երիտասարդ ակտիվիստների խմբի ձեւավորում, որն անտարբեր չի լինի Էկոլոգիական խնդիրների հանդեպ եւ, խմբի անդամները, հանդես գալով որպես իրավագիտակից քաղաքացիներ, ակտիվ մասնակցություն կցուցաբերեն սույն ոլորտում խնդիրների լուծման

եւ որոշումների կայացման գործընթացներում:

«**ԷկոԼաք**» ծրագիրը **MitOst** եւ **CRISP** կազմակերպությունների կողմից տարածաշրջանի մի շարք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Յյուսիսային Կովկասում եւ Թուրքիայում իրականացվող «**Քաղաքացիական միացյալ կրթություն**» նախաձեռնության վեց բաղադրիչներից մեկն է եւ մշակվել է՝ ելնելով տեղական կարիքների ուսումնասիրությունից:


Նախաձեռնությունը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնության արտաքին հարաբերությունների նախարարության եւ Ռոբերտ Բոշ հիմնադրամի կողմից:



IKV Pax Christi նիդեռլանդական իր գործընկերոջ հետ «ԽԵ»-ն «Ապահով գինվորներ՝ անվտանգ Հայաստանի համար» համատեղ ծրագրի շրջանակներում մտադիր է հայկական բանակում տիրող մարդու իրավունքների անմխիթար իրավիճակի մասին հանրությանը իրազեկելով՝ հասարակական պահանջարկ ձևավորել Հայաստանի գինված ուժերում մարդու իրավունքների հանդեպ հարգանքի, կառույցի թափանցիկության, իրավախախտումների դեպքում՝ բոլոր մեղավորներին համարժեք պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի եւ ԵԱՀԿ միջազգային փորձագետների ներգրավելով՝ մոբիլիզացնել տեղական, ազգային եւ միջազգային դերակատարներին, ովքեր կարող են դրական ազդեցություն ունենալ բանակում տիրող իրավիճակի վրա, ինչպես նաեւ՝ սպայական կազմի մոտ

զարգացնել մարդու իրավունքների եւ միջազգային պայմանագրերի մասին գիտելիքները, ստանալով միջազգային կազմակերպությունների (այդ թվում՝ **IKV Pax Christi**) եւ տարբեր կառույցների (ՆԱՏՕ, ԵԱՀԿ, ԵՄ եւ այլն) աջակցությունը՝ հանդես գալ բանակում բարեփոխումների իրականացման օգտին նախաձեռնություններով:

Այս ճանապարհով «ԽԵ»-ն մտադիր է հասնել իշխանությունների կողմից հիմնախնդրի հանդեպ զգայունության բարձրացմանը, կտրել տեղական եւ միջազգային հանրությունների անտարբերությունը բանակում տիրող բռնությունների եւ մարդու իրավունքների ոտնահարումների հանդեպ, ներգրավելով միջազգային փորձագետներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին եւ անկախ հետազոտողներին՝ ուսումնասիրել



խնդիրը տարբեր տեսանկյուններից եւ ձեւավորել բանակում մարդու իրավունքների պաշտպանության եւ իրավախախտումների կանխման այլընտրանքային մոդելներ, որոնք առավելագույնս կհամապատասխանեն հայաստանյան իրավիճակին:

Այս ամենի հետ միաժամանակ, կազմակերպությունը շարունակում է հետեւողական աշխատանքներ իրականացնել իր ինստիտուցիոնալ զարգացման ուղղությամբ՝ այդ

նպատակով պարբերաբար նախաձեռնելով կազմակերպության անդամների եւ կամավորների կարողությունների ու հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ: Վեր հանելով ու սահմանելով անհրաժեշտ կարիքները՝ կազմակերպվում են համապատասխան դասընթացներ, աշխատանքային քննարկումներ՝ անհրաժեշտության դեպքում իրավիրելով բարձր որակավորում ունեցող միջազգային մասնագետների, ինչպես նաեւ, վերապատրաստման եւ նոր կարողությունների ձեռքբերման նպատակով, ապահովվում աշխատակազմի եւ կամավորների մասնակցությունը տարածաշրջանային կամ միջազգային դասընթացներին:






**ՖԻՆԱՆԱՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ֆինանսական
հատկացումներ/եկամուտներ/
2011-2012թթ



Ինչպես են բաշխվել ֆինանսական
միջոցները (դրամական միավորը՝ եվրո)




2011




2012




2012



67




Ծախսերը 2011 թ.-ին



- 1 ■ դասընթացային ծախսեր 13.2%
- 2 ■ ծրագրային գույքի ձեռքբերում 14.5%
- 3 ■ ճանապարհային ծախսեր 4.79%
- 4 ■ սնունդ 0.72%
- 5 ■ ծրագրի գնահատում 2.09%
- 6 ■ դասընթացների տարածքի վարձակալում 14.68%
- 7 ■ թարգմանչական ծախսեր 5.67%
- 8 ■ այլ ծախսեր 7.25%
- 9 ■ աղմինիստրատիվ ծախսեր եւ հոնորարներ 37.1%

Ծախսերը 2012 թ.-ին



- 1 դասընթացների կազմակերպում 22.74%
- 2 աղմինիստրատիվ ծախսեր եւ հոնորարներ 33.07%
- 3 դասընթացների տարածքի վարձակալում 22.19%
- 4 ճանապարհային ծախսեր 7.35%
- 5 սնունդ 0.39%
- 6 թարգմանչական ծախսեր 4.37%
- 7 ծրագրի գնահատում 4.57%
- 8 այլ ծախսեր 5.32%





Պատկերը՝ © 2012 «Խաղաղության երկխոսություն» հկ-ի
«SWEN» տեսաֆոլովակից:
Նկարը՝ Նարեկ Կարդաշյանի

Խմբագրական կազմ՝

Խմբագիր՝
Տեքստի հեղինակ՝
Խորհրդատու՝
Լուսանկարներ՝

Էդգար Խաչատրյան
Արմինե Չաքարյան
Վահագն Անտոնյան
Արմինե Չաքարյան

© 2013 «Խաղաղության երկխոսություն» հկ
Տարեկան զեկույց 2011-2012